Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝*[http://www.armin.am](http://www.armin.am)

*Էլ. փոստ՝*[info@armin.am](mailto:info@armin.am)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# Միջնադարյան արևելաքրիստոնեական արվեստ (4-10-րդ դարեր)

*Դասընթացի ծրագիր*

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 7.03
ԳՄԴ 85.1
Մ 734

*Հրատարակության է երաշխավորել*
*ԵՊՀ պատմության ֆակուլտետի*
*գիտական խորհուրդը*

Կազմեց՝ արվեստագիտության թեկնածու
ասիստենտ **Զ. Ա. Հակոբյանը**

Մ 734 Միջնադարյան արևելաքրիստոնեական արվեստ (4-10-րդ դարեր): Դասընթացի ծրագիր/Կազմեց Հակոբյան Զ.: -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 52 էջ:

ՀՏԴ 7.03
ԳՄԴ 85.1

**ISBN 978-5-8084-2121-9**

© ԵՊՀ հրատ., 2016
© Կազմողի համար, 2016

# Բովանդակություն

Նպատակը .......... 5
Կրթական արդյունքները .......... 5
Ներածություն .......... 6
1. Պաղեստին .......... 9
1.1. Ճարտարապետություն .......... 9
1.2. Գեղանկարչություն և դեկորատիվ-կիրառական արվեստ .......... 10
1.2.1. Խճանկար .......... 10
1.2.2. Պաղեստինյան տափաշշեր .......... 11
2. Քրիստոնյա Եգիպտոս .......... 12
2.1. Ղպտական ճարտարապետություն .......... 13
2.2. Ղպտական քանդակ .......... 14
2.3. Գեղանկարչություն և կիրառական արվեստ .......... 14
2.3.1. Ղպտական սրբապատկերներ .......... 14
2.3.2. Ղպտական գործվածք .......... 15
2.3.3. Նկարազարդ ձեռագրեր .......... 15
2.3.4. Որմնանկարներ .......... 16
3. Ասորիք (Սիրիա) .......... 17
3.1. Ճարտարապետություն .......... 17
3.2 Գեղանկարչություն .......... 19
3.2.1. Խճանկար .......... 19
3.2.2. Որմնանկար .......... 20
3.2.3. Նկարազարդ ձեռագրեր .......... 20
4. Կապադովկիա .......... 22
4.1. Ճարտարապետություն .......... 22
4.2. Քանդակագործություն .......... 23
4.3. Մոնումենտալ գեղանկարչություն .......... 24
5. Հայաստան .......... 25
5.1. Ճարտարապետություն .......... 25
5.2. Քանդակագործություն .......... 28
5.3. Գեղանկարչություն .......... 31

5.3.1. Խճանկար ....................................................................................................31
5.3.2. Որմնանկար.......................................................................................................31
5.3.3. Վաղ նկարազարդ ձեռագրեր.......................................................................32
6. Աբխազիա ............................................................................................................34
6.1. Ճարտարապետություն...................................................................................34
6.2. Քանդակագործություն ...................................................................................35
6.3. Խճանկար..........................................................................................................35
7. Վրաստան .............................................................................................................36
7.1. Ճարտարապետություն...................................................................................36
7.2. Քանդակագործություն ...................................................................................37
7.3. Գեղանկարչություն .........................................................................................39
Պարտադիր գրականության ցանկ ...................................................................40
Համառոտագրություններ ..................................................................................51

## Նպատակը

Դասընթացի նպատակն է ներկայացնել միջնադարյան արևելաքրիստոնեական արվեստը 3-10-րդ դարերի ժամանակահատվածում՝ Պաղեստինի, Եգիպտոսի, Ասորիքի, Կապադովկիայի, ինչպես նաև Հայաստանի, Վրաստանի և Աբխազիայի տարածքում: Դասընթացի շրջանակներում ներկայացվելու ու վերլուծվելու են նշված տարածքների միջնադարյան եկեղեցական կառույցները, ինչպես նաև կերպարվեստի՝ քանդակի, որմնանկարի, խճանկարի ու նկարազարդ մատյանների նմուշները: Ի մի են բերվելու արևելաքրիստոնեական արվեստի առանձնահատուկ գծերը, ցույց են տրվելու մշակութային ընդհանրությունները, ինչպես նաև տարբերություններն ու հատկապես տեղային (ազգային) գծերը:

## Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. Կիմանա նշված տարածքների կարևոր հուշարձանները, դրանց ստեղծման պատմական նախադրյալները:
2. Կկարողանա կատարել ոճական և պատկերագրական վերլուծություն, կկարողանա տարբերել ճարտարապետական կառույցները ըստ վերջիններիս տիպերի և տեղական առանձնահատկությունների:
3. Կկարողանա ավելի լավ հասկանալ և ճիշտ գնահատել հայկական միջնադարյան արվեստը ընդհանուր արևելաքրիստոնեական համատեքստում:

*Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:*

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր պատասխանի հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 5 միավոր: Ուսանողի հանրագումարային գնահատման առավելագույն արժեքը 20 միավոր է (մասնակցությունը 2 միավոր, ընթացիկ քննությունները 8 միավոր, եզրափակիչ քննությունը՝ 10 միավոր):

## Ներածություն

Արևելաքրիստոնեական արվեստ հասկացությունը: Արևելաքրիստոնեական երկրները (Եգիպտոս, Եթովպիա, Ասորիք, Պաղեստին. Կապադովկիա, Հայաստան, Աբխազիա, Վրաստան), դրանց աշխարհագրական դիրքն ու բնակեցվող ժողովուրդները: Քաղաքական, տնտեսական իրավիճակն ու մշակութային մթնոլորտը նոր հավատի՝ քրիստոնեության տարածման շրջանում:

Արևելյան Եկեղեցու կազմավորման և զարգացման առանձնահատկություններն ու նախադրյալները (395 թ. Հռոմեական կայսրության բաժանումը, 1054 թ. Տիեզերական Եկեղեցու բաժանումը): Արևելքը որպես քրիստոնեության օրրան: Վաղ քրիստոնեական համայնքները (Կումրանյան համայնք): Հուդայականության, ինչպես նաև անտիկ և արևելյան պաշտամունքների ազդեցությունը քրիստոնեության ձևավորման վրա: Աշխարհընկալման և արվեստի սինկրետիկ բնույթը հելլենիստական մշակույթը վերապրած երկրներում:

Միջերկրածովյան երկրների մշակույթը քրիստոնեության տարածման և հաստատման շրջանում: Հելլենիստական մշակութային և գիտության խոշոր կենտրոնները տարածաշրջանում: Միջերկրածովյան մշակույթի «դասական» ժառանգությունը և դրա նշանակությունը քրիստոնեական արվեստի ձևավորման համար: Միջերկրածովյան մշակութային կենտրոնների ընդհանրությունները և տարբերությունները: Անտրոպոմորֆ կերպարները քրիստոնեական կրոնական պատկերացումների և կերպարվեստի համատեքստում: Անտիկ մոտիվների և կերպարների վերաիմաստավորումը:

Պաշտամունքային համակարգի փոփոխությունը, պոլիթեիզմից՝ մոնոթեիզմ և դրանց տարբերությունը: Փոփոխությունները աշխարհայացքի ու գեղագիտության մեջ: Նոր ուսմունքի առաջին քարոզիչները: Քրիստոնեության տարածման պատմական և ավետարանական ավանդույթները: Առաքյալների քարոզչական գործունեությունը տարբեր երկրներում: Վաղքրիստոնեական համայնքների կազմակերպման ու գործունեության առանձնահատկությունները: Դոմուս էկլեսիաները (Դուրա-Եվրոպոս), կատակոմբները (Հռոմ, Ալեքսանդրիա): Քրիստոնյա

միակյացներն ու վանականությունը: Նոր ուսմունքի բանավոր և գրավոր ավանդույթների ձևավորումը (Սեպտուագինտա՝ Յոթանասնից թարգմանությունը, Եգիպտոս, 3-րդ դ.): Հին և Նոր Կտակարաններ: Պարականոն Ավետարանները:

Քրիստոնեական գաղափարախոսությունն ու փիլիսոփայությունը: Նոր հավատի առաջին մեկնիչները (Փիլոն Ալեքսանդրիացի, գնոստիկներ) ու տեսաբանները (Դիոնիսիոս Արեոպագացի, Պրոկղիոս և այլն): Առաջին աստվածաբանական վեճերը և նոր հավատի հիմնական դրույթները: Սբ. Երրորդությունը և 325 թ. Նիկեայի հավատո հանգանակը: Արիոսականությունը: Քրիստոսի էության խնդիրը: Նեստորականությունը և Եփեսոսի 431 թ. Տիեզերաժողովը: 451 թ. 4-րդ Տիեզերաժողովը Քաղկեդոնում՝ միաբնակներն (մոնոֆիզիտներ) ու երկաբնակները (դիոֆիզիտներ): Արևելյան Եկեղեցու տրոհումը և միաբնակության պահպանումը Արևելքում (Եգիպտոս, Եթովպիա, Ասորիք, Հայաստան և Վրաստան): Հարցի աստվածաբանական և քաղաքական տեսանկյունները: Կեսարիան որպես Արևելյան Եկեղեցիների հոգևոր կենտրոն:

Քրիստոնեական արվեստի պարբերացումը (վաղ քրիստոնեական, վաղ և զարգացած միջնադար, ուշ միջնադար) և արևելաքրիստոնեական առանձին երկրների պարբերացման առանձնահատկությունները: Ամենավաղ մեզ հասած քրիստոնեական հուշարձանները: Ուշ անտիկ և հին արևելյան մշակույթների դերը քրիստոնեական արվեստի ձևավորման մեջ: Վաղ բյուզանդական արվեստը և վերջինիս ազդեցությունը արևելաքրիստոնեականի վրա: Ճարտարապետության ու կերպարվեստի մեջ անտիկ ավանդույթների վերաիմաստավորումն ու շարունակությունը: Սիմվոլիկ մտածելակերպի ձևավորումը միջնադարյան ու արևելաքրիստոնեական արվեստում: Քրիստոնեական խորհրդանշական համակարգի ձևավորումը: Պատկերագրության ձևավորումը և դրա նշանակությունը քրիստոնեական արվեստի համար: Քրիստոնեական տաճարի հատակագծային և կառուցվածքային առանձնահատկությունները, հիմնական ճարտարապետական ձևերն ու արտաքին հարդարման սկզբունքները: Արևելաքրիստոնեական տաճարի ներքին հարդարման համակարգի ձևավորումը: Տաճարը որպես Տիեզերք:

Արաբական արշավանքները և արևելաքրիստոնեական երկրների

նվաճումը: Տարածքային և քաղաքական փոփոխությունները 7-րդ դարում: Կայսրության տարածքների կրճատումն ու արաբների գերիշխանության հաստատումը: Արաբական նվաճումները Անդրկովկասում: Քաղաքական և տնտեսական իրավիճակը Արևելքում և դրա անդրադարձը արվեստի վրա: Մշակութային դադար: Քրիստոնեական մշակույթի գոյատևումը իսլամական միջավայրում: Արևելաքրիստոնեական արվեստի վաղ փուլի ավարտը:

# 1. Պաղեստին

Պաղեստինը նոր հավատի տարծման շրջանում և նրա մաս կազմող տարածքները: Պաղեստինը որպես քրիստոնեության ձևավորման կարևոր օղակ: Առաջին հուդայա-քրիստոնեական համայնքները: Պաղեստինը որպես Քրիստոսի երկրային կյանքի պատմական վայր, քրիստոնեական սրբավայրերի ձևավորումը: Կոստանդիանոս կայսեր կառուցողական քաղաքականությունը և քրիստոնեական կարևորագույն սրբավայրերը: Կենարար Խաչի հայտնաբերումը Հեղինեի կողմից (326-327 թթ.): Երուսաղեմը որպես կայսրության կրոնական կենտրոն: Ավետյաց Երկիրը որպես համայն քրիստոնյա աշխարհի ուխտագնացության վայր: Ուխտագնացության դարավոր ավանդույթները Ավետյաց Երկրում. ուխտագնացների նկարագրությունները որպես պատմական աղբյուր:

Վաղ քրիստոնեական շրջանի Երուսաղեմը. հին քաղաքը, Ձիթենյաց և Սիոնի լեռները, Գեթսեմանին (Տիրամոր գերեզմանը): Պաղեստինի նշանավոր վայրերը՝ Բեթղեհեմ, Նազարեթ (Հովսեփի եկեղեցին), Բեթանիա. Կապերնաում (Պետրոս առաքյալի տունը) և այլն): Պաղեստինի հուշարձանների ուսումնասիրությունը և ատվածաշնչյան հնագիտությունը (Բագատտի, Կորբո, Պիչիրիլլո): Հայերի ներկայությունը Ավետյաց Երկրում: Ավետյաց Երկրի և Երուսաղեմի հայկական եկեղեցիներն ու վանքերը: Հայկական վաղքրիստոնեական շրջանի արձանագրությունները:

## 1.1. Ճարտարապետություն

Պաղեստինի ամենավաղ քրիստոնեական կառույցները որպես սրբազան վայրերի հաստատման միջոց: Պաղեստինի և Հորդանանի ճարտարապետության երեք ուղղությունները՝ էգեյան, կոստանդնուպոլսյան, ասորական (արևելյան): Ավետյաց երկրում Կոստանդիանոս Մեծի կողմից կառուցված խոշոր բազիլիկները: Եվսեբիոս Կեսարացու «Կոստանդիանոսի կյանքը» աշխատությունը կայսերական մեծ համալիրների կառուցման մասին: **Երուսաղեմի Հարության տաճար-համալիրի** վաղա-

գույն հորինվածքը (335 թ.)։ Համալիրի բաղկացուցիչ մասերը (հնգանավ բազիլիկ, ռոտոնդա, ատրիում, Գողգոթայի ժայռը)։ Համալիրի «ոչ կանոնիկ» ուղղվածությունը և դրա պատճառները։ Համալիրի ճարտարապետական առանձնահատկությունները։ Հարության տաճարի վերակառուցումը Մոդեստոսի կողմից 7-րդ դ. սկզբին։ Հարության Ռոտոնդան և դրա դերը համաքրիստոնեական ճարտարապետության համար։ Հարության տաճարի հաջորդ վերակառուցումները և Տիրոջ Գերեզմանն այսօր։ **Բեթղեհեմի Ծննդյան բազիլիկը** (339 թ.)։ Կոստանդիանոսյան ժամանակաշրջանի հորինվածքը։ Ծննդյան բազիլիկի վերակառուցումը Հուստինիանոսի ժամանակաշրջանում (6-րդ դար)։ Ծննդյան բազիլիկի եռախորան հորինվածքը և վերջինիս արձագանքը բյուզանդական և 7-րդ դարի հայկական ճարտարապետության մեջ։ Սբ. Հեղինեի գործունեությունը և Կենարար Խաչի հայտնաբերումը։ Սբ. Հարության համալիրի Սբ. Հեղինեի մատուռը (Սբ. Գրիգորի մատուռը)։ Կենարար Խաչի հայտնաբերման եկեղեցին (վերանվանված Սբ. Վարդանի կամ Հայոց նահատակների մատուռը)։ **Սիոնի բազիլիկը** Երուսաղեմի հարավային մասում։ Սբ. Ստեփանոսի մասունքներ հայտնաբերումը Պաղեստինում։ Երուսաղեմի **Սբ. Ստեփանոսի** եկեղեցին (437-460) և դրա ընդհանրությունները Կոստանդնուպոլսի Ստուդիոս (Սբ. Հովհաննես Մկրտիչ) բազիլիկի հետ։ **Գեռասայի** (Հորդանան) **Առաքյալների, մարգարեների և նահատակների** (465 թ.)։ Գեռասայի տաճարային համալիրը՝ բաղկացած **Սբ. Հովհաննես Մկրտիչ** կենտրոնագմբեթ (531 թ.) և **Սբ. Գևորգին** (529/530 թթ.) **ու Սրբ. Կոզմասին և Դամիանին** (533 թ.) նվիրված բազիլիկ մատուռ-եկեղեցիներից։ Հրեական աասոարիների (1-2-րդ դարեր) դեկորատիվ հարադրանքը և դրանց ընդհանրությունները վաղքրիստոնեական տարբեր հուշարձանների զարդաձևերի հետ։

## 1.2. Գեղանկարչություն և դեկորատիվ-կիրառական արվեստ

### *1.2.1. Խճանկար*

Հատակի խճանկարները Պաղեստինում՝ անտիկ ավանդույթները և նորագույն միտումները։ Հրեական սինագոգների և քրիստոնեական եկեղեցիների հատակի խճանկարները՝ ընդհանրությունները և տարբերությունները։ Ընդհանուր մշակութային միջավայրի և արվեստանոցնե-

րի խնդիրը արևելքում: Գալիլեայի խճանկար համալիրները՝ **Ցիպորիս** (5-րդ դար), **Բեթ-Շեանն և Բեթ-Ալֆա** (6-րդ դար), **Նիրիմ** (5-րդ դար): Կենդանակերպի նշաններով խճանկարները: Նեղոսյան տեսարաններով խճանկարները: Խճանկարային հորինվածքի հիմնական զարդատարրերը և դրանց խորհրդաբանությունը: Հրեական կերպարվեստի ֆենոմենը: Պաղեստինի քրիստոնեական խճանկարները՝ **Մամշիթ** (4-րդ դար), **Մադաբայի** (աստվածաշնչյան Նեբավ (Մաֆաա)), **Սբ. Առաքելոց**, **Ումմ ալ-Ռազասի Սբ. Սարգսի, Նեբո լեռան Մովսեսի** եկեղեցիների (Հորդանան), ինչպես նաև **Տաբխայի** (անտիկ Heptapegon) **Հացի բազմացման** և **Երկրային բարիքների** եկեղեցիները (6-րդ դար, Գալիլեա): Հորդանանի խճանկարների թեմատիկան: **Բեթղեհեմի Ծննդյան բազիլիկի** հատակի խճանկար դրվագները (4-րդ դ.) և պատի խճանկարի մնացորդները (12-րդ դարեր): **Մադաբայի** խճանկար-քարտեզը (6-րդ դար): Տեղագրական տարրերով այլ խճանկար հատակներ. **Գեռասայի Սբ. Հովհաննես** (531 թ.) և **Սրբ. Պողոս և Պետրոս** (540 թ.), **Ումմ էլ-Ռազասի Սբ. Ստեփանոս** (8-րդ դարեր), **Քիրբաթ ալ-Սամրայի Սբ. Հովհաննես, Մեցնեի Հայտնության եկեղեցին** (7-8-րդ դարեր): Գեռասայի երեք եկեղեցիների (համալիրի) խճանկարային հատակները: Պատկերների շուրջ տարվող վաղմիջնադարյան բանավեճերը (Նիլոս, Օլիմպիոդորոս), ինչպես նաև Թեոդոսիոս II կայսեր սահմանափակումները սրբազան պատկերների վերաբերյալ (427 թ.):

### *1.2.2. Պաղեստինյան տափաշշեր*

**Մոնցայի** և **Բոբբիոյի աբբայությունների** հայտնի տափաշշերը. հավաքածուի ձևավորման պատմությունը: Պաղեստինյան տափաշշերի նշանակությունը, թվագրությունը, ինչպես նաև տարածման աշխարհագրությունը և ժամանակաշրջանը: Պաղեստինյան տափաշշերի ուսումնասիրությունը Ա. Գրաբարի կողմից: Տափաշշերի պատկերագրական առանձնահատկությունները և նշանակությունը վաղքրիստոնեական արվեստի համատեքստում: Պաղեստինյան տափաշշերի առավել հաճախ հանդիպող պատկերները: Հարության Տաճարի բազմաթիվ պատկերները և դրանց կարևորությունը քրիստոնեական համալիրի վերակառուցման համար:

## 2. Քրիստոնյա Եգիպտոս

Եգիպտոսը հարուստ մշակութային երկիր և քրիստոնեական մշակույթի ձևավորման կարևոր օղակ: Եգիպտոսի հին և հելլենիստական շրջանների արվեստը որպես ձևավորվող քրիստոնեական արվեստի հիմք: «Ղպտական արվեստ» տերմինը և նրա առաջացման ժամանակը: Եգիպտոսի քրիստոնեական արվեստի բնեռացումը երկու դարաշրջանների սահմանագծին. մի կողմից հելլենիստական քաղաքներն ու խոշոր մշակութային կենտրոնները, մյուս կողմից՝ երկրի կենտրոնական և խորքային (անապատային) մասում գտնվող հին եգիպտական բնակավայրերը, դրանց զուգահեռ զարգացումը և փոխազդեցությունը: Ալեքսանդրիան որպես Միջերկրածովյան տարածաշրջանի գիտության, մատենագիտության, փիլիսոփայության խոշորագույն կենտրոն: Հելլենիստական այլ կենտրոններ՝ Ֆայումի օազիս, Անտինոպոլիս, Հերակլեոպոլիս, Հերմոպոլիս, Անտինոյե, Ֆիլադելֆիա և այլն:

Եգիպտական հին կրոնների ազդեցությունը նոր ձևավորվող քրիստոնեության կրոնական պատկերացումների վրա (հետմահու հատուցումը, հարության գաղափարը): Մեմֆիսյան աստվածաբանական երկը և Սուրբ Գիրքը: Էխնաթոնի բարեփոխումները և միաստվածության գաղափարը: Քրիստոնեական տաճարի խորհրդաբանության առնչությունները Եգիպտական տաճարի հետ: Քրիստոնեական և որոշ հին Եգիպտական աստվածների նույնացումը (Օսիրիս՝ Քրիստոս, Իսիդա՝ Տիրամայր Աստնտու):

Մենաստանների առաջացումը Եգիպտոսի անապատներում: Ճգնավորականությունը որպես քրիստոնեական ծառայության տեսակ: Վանականության ավանդույթների ձևավորումը Եգիպտոսում և դրա տարածումը այլ քրիստոնեական երկրներում:

Ղպտական արվեստի գիտական ուսումնասիրությունը: Կահիրեի ղպտական արվեստի թանգարանը (16 հազար նմուշ): Հայերի ներկայությունը Եգիպտոսում մ. թ. 1-ին դարից սկսած և հայկական համայնքների ձևավորումը 7-8-րդ դդ.: Հայերի զբաղեցրած բարձր դիրքերը 10-12-րդ դդ.՝ Ֆաթիմյանների կառավարման ժամանակաշրջանում: Սպիտակ վանքի հայկական և ղպտական արձանագրություններով որմնանկար-

ները և Թեոդորոս նկարչի և գրչի ստորագրությունը: Մատթեոս Ուռհայեցին Եգիպտոսում բնակվող հայերի մասին և հայկական եկեղեցական թեմի հիմնադրումը Կահիրեում:

## 2.1. Ղպտական ճարտարապետություն

Քրիստոնեական պաշտամունքային կառույցները Եգիպտոսում՝ հելլենիստական կենտրոններն ու անապատային մենաստանները: Ալեքսանդրիայի ծայրամասում կառուցված **Սբ. Մինասի (Մինայի) համալիրը**՝ բազիլիկ եկեղեցի, քառախորան վկայարան և ութանիստ (օկտագոն) մկրտարան (ավարտ. 490 թ.՝ կայսր Զենոնի օրոք): Սբ. Մինասի համալիրը որպես խոշոր ուխտագնացության կենտրոն: Սբ. Մինասի ճարտարապետական համալիրի մայրաքաղաքային գծերը: **Սբ. Մարկոս առաքյալի բազիլիկը** (չի պահպանվել): **Էլ-Փելուսիոնի** (Ֆելուզիեի) բազիլիկը: Հելլենիստական կենտրոնների բազիլիկների տիպաբանական առանձնահատկությունները:

Վերին և միջին Եգիպտոսի այսպես կոչված ղպտական տիպի եկեղեցիները և դրանց հորինվածքային առանձնահատկությունները (Հերմոպոլիսի մայր տաճարը 430-440 թթ., Սպիտակ վանքի եկեղեցին): Խորքային Եգիպտոսի ղպտական վանքերը (**Սպիտակ, Կարմիր, Բառիտի, Վադի Զագրայի, Վադի Նատրուն, Սբ. Մակարիոսի, Սբ. Անտոնիոսի և Սիրիական** վանքերը) և մենաստանները: Վանականության ակունքները՝ Պաքոմոս Մեծ (292-348), Շենուտե (333-451): Սպիտակ վանքի (Դեր-էլ Աբյադ) հիմնադրումը վարդապետ Շենուտեի կողմից (մոտ 440 թ.): Վանքային համալիրի և եկեղեցու համադրումը Սպիտակ վանքի հորինվածքում: Վանքի հայերեն արձանագրությունները: Կարմիր վանքի (Դեր-էլ Ախմիմ) հիմնադրումը 5-րդ դ.: Սպիտակ և Կարմիր վանքերի հորինվածքային ընդհանրություններն ու տարբերությունները: **Բառիտի վանքը** (հիմնադրումը 6-րդ դ., Հուստինիանոս կայսեր օրոք): Վանքի ճարտարապետությունը (եկեղեցիներ, մատուռներ), հարդարանքը (որմնանկար, քանդակ): Էլ-Բագավատի դամբարանադաշտը. կառուցվածքը, մատուռների ճարտարապետական տիպերը, հարդարանքը: **Սինայ լեռան Սբ. Կատարինեի վանքը**. վանքի պատմությունն ու նշանակալից վայրերը:

## 2.2. Ղպտական քանդակ

Քարի մշակման ավանդույթները Եգիպտոսում: Օգտագործվող քարի տեսակները (մարմար, բազալտ, գրանիտ, ծիրանաքար, կրաքար): Ղպտական քանդակի ոճական առանձնահատկությունները՝ հունա-հռոմեական դասական և արևելյան ավանդույթները: Ղպտական քանդակային հուշարձանները (ճարտարապետական հարդարանք, ստելաներ, տապանաքարեր, սարկոֆագներ): Ղպտական մահարձանները և դրանց տարատեսակները (ստելաներ, էդիկուլաներ, օբելիսկներ, տապանաքարեր): Մահարձանների պատկերաքանդակները: Մահարձանների հունա-հռոմեական (Դիոնիսոս, Օրփեոս, Լեդա և այլն), հին եգիպտական (անխ, աչք, աստիճան) և Հին և Նոր Կտակարանային թեմատիկան (Քրիստոս, առաքյալներ, հրեշտակներ, Աբրահամ, Հովսեփ, Երեք մանկունք հնոցում և այլն): Քրիստոնեական խորհրդանիշները ղպտական քանդակում (խաչ, արմավաճյուղ, նավակ, խարիսխ և այլն): Անխի և խաչի պատկերների պատկերագրական և իմաստային նույնացումը: Ճարտարապետական հարդարանքի մասեր՝ քարավորներ, ճակատակալներ և դրանց առավել տարածված սյուժեները (Խաչի Համբարձումը, Քրիստոսի Համբարձումը, Դիոնիսոսյան տոնախմբություններ): Փայտի և փղոսկրի մշակման արվեստը միջնադարյան Եգիպտոսում և հուշարձանների հիմնական խումբը (եկեղեցու դռներ, սարկոֆագներ, գրքի կազմեր, մասնատուփեր):

## 2.3. Գեղանկարչություն և կիրառական արվեստ

### *2.3.1. Ղպտական սրբապատկերներ*

Ֆայումյան դիմանկարների հայտնաբերումը 19-րդ դ. վերջին և դրանց գիտական ուսումնասիրությունը: Եգիպտոսում հայտնաբերված ուշ անտիկ դիմանկարները (Ֆայումի օազիս, Խավարայի դամբարանները): Ֆայումյան դիմանկարների գործառութային, գեղանկարչական և հորինվածքային առանձնահատկությունները և դրանց կապը վաղ սրբապատկերների հետ: Կերպարի պաշտամունքի անտիկ ավանդույթը և դրա վերաիմաստավորումը քրիստոնեական արվեստի համատեքս-

տում: Սրբազան կերպարի պաշտամունքը կամ սրբապատկերը: Ուշ ֆայումյան դիմանկարները և ղպտական սրբապատկերները: Ղպտական՝ «ասկետիկ» ուղղության սրբապատկերները (Քրիստոս և Սբ. Մինաս, Մարկոս առաքյալ, Հայր Աբրահամ, Սբ. Թեոդորոս, Գաբրիել հրեշտակ, Սարգիս և Բաքոս): Վաղ սրբապատկերների տեխնիկան ու անտիկ ավանդույթների ժառանգությունը: Վաղ սրբապատկերների պատկերագրական և ոճական առանձնահատկությունները: Սրբապատկերը և նրա իմաստաբանությունը: Կերպարի «անառարկայացումը» և նոր արտահայտչականությունը: Սբ. Կատարինեի վանքը և նրա սրբապատկերները:

### *2.3.2. Ղպտական գործվածք*

Ղպտական գեղարվեստական գործվածքը և դրա տեղը միջնադարյան Եգիպտոսի արվեստում: Ղպտական գործվածքների հայտնաբերման ժամանակը և տեղագրությունը (Սաքքարա, Ֆայում, Ախմիմ, Անտինոյե): Ղպտական գործվածքների խոշոր հավաքածուները (Լուվր, Էրմիտաժ, Ղպտական թանգարան): Ղպտական գործվածքների պարբերացումը ըստ ոճի և թեմատիկայի: Կատարման տեխնիկան և ընդհանրությունները կարպետի և գոբելենի հետ: Ղպտական գործվածքների պատկերագրական բազմազանությունը: Հունա-հռոմեական և հին Եգիպտական թեմատիկա: Ավետարանական և Աստվածաշնչյան պատկերներ (տե՛ս քանդակի բաժինը): Ղպտական գործվածքները որպես պահպանիչ թալիսման: Ղպտական գործվածքների իմաստաբանությունը ըստ Բայեի՝ վախճանաբանական (էսխատոլոգիական) և փրկչագործական ( սոտերիոլոգիական) գործառույթը:

### *2.3.3. Նկարազարդ ձեռագրեր*

Եգիպտոսի դերը ձեռագիր մատյանների ձևավորման գործում և Հին Արևելքի ավանդույթները այդ բնագավառում: Անցումը պապիրուսից (փաթեթաձև ձեռագիր, գալարակ)՝ ձեռագիր մատյանին (կոդեքսին): Ալեքսանդրիայի և Պերգամոնի գրադարանների մրցակցությունը և կաշ-

վի մշակման նոր եղանակի հայտնաբերումը Պերգամոնում: Մատյանի տեսքը և կառուցվածքը: Քրիստոնեական Եգիպտոսի նկարազարդ ձեռագրերի երկու ուղղությունները կամ ավանդույթները՝ Ալեքսանդրիայի դպրոցը և անապատային վանքերը: Երկու ավանդույթների գեղարվեստական առանձնահատկությունները: Վանական միջավայրում ստեղծված մանրանկարների «գրաֆիկական» ոճը: Ղպտական ձեռագրերի ամենավաղ կազմերը: Ղպտական ձեռագրերի հարուստ զարդարումը (գլխատառեր, լուսանցազարդեր): Ղպտական ձեռագրերի խաչային պատկերները: Կահիրեի, Լոնդոնի և Նյու-Յորքի թանգարանների ղպտական ձեռագրերը:

## *2.3.4. Որմնանկարներ*

Եգիպտոսի ամենահին որմնանկարների դրվագները Ալեքսանդրիայի 3-րդ դ. Կարմուզ գետնափորներում: **Էլ-Բագավատի** դամբարանադաշտի որմնանկարները որպես անցումային՝ ուշ անտիկ և վաղ քրիստոնեական շրջանի հուշարձան: Որմնանկարների թվագրությունը: Մատուռների կառուցվածքը և որմնանկարների բաշխումը: Ոճական և պատկերագրական առանձնահատկությունները: Երկու հայտնի մատուռները՝ «Ելքի» № 30 և «Խաղաղության» № 80: «Ելքի» մատուռի թեմատիկան և Աստվածաշնչյան պատմությունները: Որմնանկարների պատմողական սկզբունքը: «Խաղաղության» մատուռի թեմատիկան և որմնանկարների բաշխման սկզբունքը: Այլաբանություններ, Հին և Նոր Կտակարանային կերպարներ: Ավետման ամենավաղ պատկերագրությունը:

**Բաուիտի** վանքի որմնանկարները (5-6-րդ դ.): Նկարազարդ մատուռների պատկերագրական թեմատիկան (եգիպտական Սբ. Հայրերը, Դավիթ մարգարեի կյանքի 12 դրվագները և այլն): Խորանի նկարազարդման համակարգի ձևավորումը համաձայն արևելյան պատկերագրական ավանդույթների: Քրիստոսի Համբարձման բազմաթիվ տեսարանները: Տիրամոր պատկերագրության տարատեսակները Բաուիտի որմնանկարներում: **Սաքքարայի** վանքի որմնանկարները (6-7-րդ դդ.): Ոճական առանձնահատկությունները (հարթային, գրաֆիկական): Սաքքարայի Տիրամայր ստնտուի պատկերը:

## 3. Ասորիք (Սիրիա)

Ասորիքի աշխարհագրական դիրքը և հարակից երկրները: Ասորիքի հելլենիստական մշակութային շերտը: Հելլենիստական քաղաքները՝ Անտիոք, Ապամեա, Լաոդիկեա, Տիգրիսի Սելևկիա և Որոնտեսի Սելևկիա, Դուրա-Եվրոպոս: Հռոմեական քաղաքները՝ Գեռասա, Փիլիպպուպոլիս: Փյունիկյան քաղաքները՝ Տյուրոս, Սիդոն, Բիբլոս (Գիբլոս): Արամեական քաղաքները՝ Պետրա, Բոսրա, Դամասկոս, Պալմիրա:

Օսրոենեն, որպես ամենավաղ քրիստոնեական պետություն-իշխանություն (207 թ.): Եդեսիայի Աբգար թագավորը և Քրիստոսի անձեռակերտ պատկերը՝ Վարշամակը: **Եդեսիան**, որպես Ասորիքի խոշոր գիտական և կրթական կենտրոնը և **Եփրեմ Ասորու** (4-րդ դ.) գործունեությունը, ինչպես նաև Եդեսիան՝ Ուռհան որպես հայկական մշակույթի կենտրոն: **Անտիոքը** որպես հոգևոր, եկեղեցական և թեմական կենտրոն: Ասորիների դերը հելլենիստական արվեստի և մշակույթի տարածման գործում: Ասորիների թարգմանչական հարուստ ավանդույթները: Պարսկական մշակույթի ազդեցությունը: Հայերի ներկայությունը Անտիոքում (հայկական եպիսկոպոսությունը 10-րդ դ., Վասակ Պահլավունին որպես Անտիոքի կառավարիչ (1060-1077)): Հայ-ասորական գրական և մշակութային կապերը:

### 3.1. Ճարտարապետություն

Ասորական վաղքրիստոնեական շրջանի ճարտարապետության դերը արևելաքրիստոնեական, այդ թվում հայկական ճարտարապետության ձևավորման համար: Ճարտարապետական դպրոցի ձևավորումը: Բազիլիկ եկեղեցիների խորհրդաբանությունը: **Դուրա-Եվրոպոսի** քրիստոնեական մատուռը (232 թ.): Կառուցվածքը և ներքին հարդարանքը: Ամենավաղ քրիստոնեական պաշտամունքային կառույցները Ասորիքում, դրանց տարատեսակները: Ուղղանկյուն խորանով փոքր եկեղեցիները՝ **Դուրա-Եվրոպոս, Դար-Կիտա, Բակիրհա** 4-րդ դ., **Մարաթա** 392 թ.: Լատինուղիալ կամ լայնակի նավերով բազիլիկները՝ **Շակկա** 3-րդ դ., **Կանավաթ**, **Ում-իջ-Ջեմիլի**, **Տաֆտկա** 4-րդ դ.: Հորինվածքային և կոնստ-

րուկտիվ առանձնահատկությունները: Միջագետքի տարածքի նմանատիպ եկեղեցիները՝ **Սալա**, **Դեր-Մար Յաղուբ**, **Էլ-Հաթրա** (կամ էլ-Աղրա): Կեղծ Դիոնիսիոս Արիոպագացու տեսությունը Աստվածային խավարի մասին:

Ասորական խոշոր բազիլիկները և դրանց տեսակները (5-7-րդ դդ): Հիմնական բաղկացուցիչ մասերը՝ նարտեքս, ավանդատներ, աշտարակներ: Սյունաշար և մույթային կառուցվածքով բազիլիկալ եկեղեցիներ: Հորինվածքային և կոնստրուկտիվ նմանությունները ու տարբերությունները: Սյունաշար բազիլիկների անտիկ գծերը և այդ տիպի առավել հայտնի օրինակները (**Էլ-Բարախ**, **Բրադ**, **Ապամեա**, **Տուրմանին**, **Մարաթա** 5-6-րդ դդ.): Մույթերով բաժանված բազիլիկների ընդհանուր բնութագիրը և առավել հայտնի օրինակները (**Կալբ-Լուզե**, **Էլ-Անդերին**, **Ռուվեհա**, **Ռուսաֆա**, **Կերատին** 5-6-րդ դդ.): **Տուրմանինի** (6-րդ դ.) և **Կալբ-Լուզեի** (6-րդ դ.) բազիլիկների համեմատությունը: **Ռուսաֆայի** (Սերգիուպոլիս) համալիրը ( 569-586 թթ.): Ասորական բազիլիկների արտաքին հարդարման սկզբունքները: Ասորական և վաղ հայկական եկեղեցիների (Երերույք) ճարտարապետական և դեկորատիվ հարդարման ընդհանրությունները:

Կենտրոնախույս միտումները արևելաքրիստոնեական ճարտարապետության մեջ: Սիմվոլիկ և գաղափարական փոփոխությունները և տաճարաշինության տեսական հարցերը (Եվսեբիոս Պամփյուլոս, Թեոփիլոս, Բարսեղ Մեծ (Կեսարացի), Մաքսիմիոս Խոստովանող, Կոզմաս Հնդկանավորդ (Ինդիկոպլավտես): Տաճարը որպես Տիեզերք: Ասորական հիմնը նվիրված Եդեսիայի տաճարին (6-րդ.): Պաշտամունքային կառուցողական և հորինվածքային փոփոխությունները պայմանավորված գմբեթի առկայությամբ: Ժամանակի ընկալումը բազիլիկ և գմբեթավոր եկեղեցում: Մատուռների կամ վկայարանների նշանակությունը կենտրոնագմբեթ եկեղեցիների ճարտարապետական ձևավորման համար: Գմբեթի կառուցման տեխնիկական դժվարությունները ասորական ճարտարապետության մեջ: Ասորիքի «գմբեթավոր» բազիլիկները (**Բոսրայի № 1, Էլ-Բարախի**): Ասորական խաչաձև-գմբեթավոր դամբարան-եկեղեցիները (**Էլ-Անդերին, Ռուսաֆա 553 թ.**): **Քալաթ-Սիմանի համալիրը**, նրա բաղկացուցիչ մասերը, կառուցման փուլերը (476-

490 թթ.): Քալաթ-Սիմանի համալիրի հարդարանքը: Սիմոն Սյունակյացի վարքն ու պաշտամունքը արևելքում: Սյունակյացությունը որպես ճգնավորության տեսակ: **Քասր-իբն-Վարդանի** կամ **Սբ. Վարդանի** եկեղեցին (6-րդ դ. երկրորդ կես): Մայրաքաղաքային ճարտարապետության արձագանքները Ասորիքում՝ Քասր-իբն-Վարդան և Սբ. Իռենե: Քասր-իբն-Վարդանի հորինվածքային և շինարարական տեխնիկայի առանձնահատկությունները (opus mixtum): **Սբ. Մարիամի համալիրը** Եփեսոսում:

Կոստանդիանոս կայսեր հրամանով կառուցած **Մեծ Տաճարը** Անտիոքում (ավարտ. 341 թ.): Կենտրոնագմբեթ՝ ներքինից կլոր կամ բազմանիստ տաճարները՝ **Բոսրայի** (512-513 թթ.) **և Էզրայի** (510-515 թթ.) եկեղեցիները: Հորինվածքային առանձնահատկությունները: Անտիկ տարրերն ու կապը մայրաքաղաքային ճարտարապետության հետ (Սրբ. Սարգիս և Բաքոս): **Ապամեայի տաճարը** (6-րդ դ.): Հորինվածքը և կապը արևելաքրիստոնեական քառախորան եկեղեցիների հետ:

Ասորական պաշտամունքային կառույցների տոպոգրաֆիկ բաժանումը և ձևավորված որոշակի ավանդույթները (հարավային, կենտրոնական, արևելյան, հյուսիսային): Շինարարական տեխնիկան, չոր շարվածքը որպես անտիկ ժառանգություն և դրա հետ կապված կոնստրուկտիվ հնարավորությունները և սահմանափակումները: Ասորական տաճարների արտաքին և ներքին դեկորատիվ հարդարանքը:

## 3.2 Գեղանկարչություն

### *3.2.1. Խճանկար*

Ասորիքի խճանկարը և դրա ուսումնասիրությունը: Խճանկարի ակունքները և աշխարհագրությունը: Վաղ միջնադարյան խճանկարի պարբերացումը: Ոճական փոփոխությունները 3-4-րդ դդ. խճանկարներում: Թեոդոսիոս I կայսեր հրովարտակը (381 թ.) և անցումը երկրաչափական կամ վերացական (աբստրակտ) պատկերների: Հատակի խճանկարների պատկերագրական համակարգը 5-7-րդ դդ.: Հատակի խճանկարում «աշխարհի» կամ Դրախտի պատկերը: Հատակի խճանկար «գորգի» խորհրդաբանությունը: Կենդանակերպ (զոոմորֆ) խճա-

նկարային հորինվածքներ: Անտիոքի և Ապամեայի խճանկարները: Լիբանանի (Փյունիկիայի) տարածքում գտնվող 5-6-րդ դդ. խճանկարները ( **Խալդ** (6-րդ դ), **Բեթ-Մարի** (6-7-րդ դդ.), **Բեթ-Շան** (567 թ.), **Ջախրանի** (524-541 թթ.)): Անտիոքը որպես խճանկարի գեղարվեստական կենտրոն: Երուսաղեմի **Օմարի** (691—692 թթ.) և Դամասկոսի **Օմայանների մզկիթի** (705—711 թթ.) խճանկարները ստեղծված ասորի վարպետների կողմից: Օմայանների խճանկարների պատկերագրական և խորհրդաբանական ընդհանրությունները վաղքրիստոնեական նմուշների հետ: Օմայանների խճանկարների ուշ անտիկ և վաղ բյուզանդական ավանդույթները:

### *3.2.2. Որմնանկար*

Դուրա-Եվրոպոս՝ ասորական անապատի Պոմպեյքը: Դուրա-Եվրոպոսի պեղումները 1931-1932 թ. և Մ. Ի. Ռոստովցևի հետազոտությունները: **Քրիստոնեական մատուռի** որմնանկարները (232 թ.). ամենավաղ Հին և Նոր Կտակարանային պատկերներ: **Սինագոգի** որմնանկարները. աստվածաշնչյան տեսարաններ (244-245 թթ., նկարազարդ. 245-256 թթ.): Պատմողական սկզբունքը և սրբազան (հիերատիկ) պատկերները (Մովսեսի պատմությունը, Դավիթ թագավորի օծումը, Սողոմոնը, Եզեկիելը, Նոյը և այլն): Անտիկ և պարթևական գեղարվեստական ավանդույթները սինագոգի որմնանկարներում, ճակատային պատկերման խնդիրը: Պատկերների բաշխման սկզբունքը: Նկարազարդ Աստվածաշնչի պատկերաշարի հնարավոր ազդեցությունը Դուրա-Եվրոպոսի նկարազարդման համակարգի վրա (ըստ Կ. Վայցմանի): Դամասկոսի թանգարանի և Յեյլի համալսարանում գտնվող Դուրա-Եվրոպոսի սինագոգի որմնանկարների կրկնօրինակները:

### *3.2.3. Նկարազարդ ձեռագրեր*

Ասորական ձեռագիր մատյանները և ասորական բարձրագույն դպրոցները: Ասորական ձեռագրերի նկարազարդման համակարգը արևելաքրիստոնեական արվեստի համատեքստում: Ասորական վաղ

ձեռագրերը՝ **Ռաբուլայի Ավետարանը** (586 թ.): Ձեռագրի ստեղծման ու պահպանման վայրը, ուսումնասիրությունը: Ռաբուլայի ավետարանի նկարազարդման համակարգը: Ավետարանի խորանները և դրանց նկարազարդման առանձնահատկությունները. լուսանցապատկերները և դրանց թեմատիկան: Ռաբուլայի ավետարանի առանձին էջով տրված հորինվածքները: «Համբարձման» տեսարան. գեղանկարչական ավանդույթը և պատկերագրությունը: Ռաբուլայի Ավետարանի մանրանկարների ընդհանրությունները հայկական և արևելաքրիստոնեական ձեռագրերի հետ: Ռաբուլայի Ավետարանի կարևորությունը քրիստոնեական արվեստի համար:

Փարիզի ազգային գրադարանում պահվող **№ 33 ձեռագիրը** (6-7-րդ դդ.) և **№ 341 Աստվածաշունչը** (7-8-րդ դդ.): № 341 ձեռագրի պատկերների թեմատիկան ու ոճը: Ասորական մանրանկարի պատառիկները Սանկտ-Պետերբուրգի գրադարանում:

# 4. Կապադովկիա

Կապադովկիայի աշխարհագրական դիրքը և հարևան երկրները: Կապադովկիայի էթնիկական կազմն անտիկ ժամանակներից սկսած (իրանական ցեղեր, հույներ, հայեր և այլ ազգային խմբավորումներ): Կապադովկիան որպես քաղաքակրթությունների խաչմերուկ: Կապադովկիայի հելլենիզացումը Ալ. Մակեդոնացու արշավանքներից հետո: Կապադովկիան հռոմեական պրովինցիա մ. թ. 17 թ. Պոնտոսի և Փոքր Հայքի հետ միասին: Հայերի ներկայությունը այս տարածքում և քաղաքական ու մշակութային կապերը Հայաստանի հետ: Հայկական իշխանական տների տեղափոխումը Կապադովկիա (Արծրունիներ, Բագրատունիներ): Հայկական ամրոցները և վանքերը Կապադովկիայում 11-րդ դարի կեսից հետո: Կապադովկիայի քաղաքները՝ Կոմանա, Կեսարիա և այլն: Քրիստոնեության տարածումը Կապադովկիայում, ինչպես նաև Կապադովկիայի դերը տարածաշրջանում քրիստոնեության տարածման գործընթացում: Կապադովկիան եկեղեցական հայրերը և հայրաբանական գրականությունը (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Նազիանզացի):

## 4.1. Ճարտարապետություն

Փոքր Ասիայի վաղ միջնադարյան ճարտարապետությունը որպես քրիստոնեական տաճարաշինության կարևոր օղակ: Կապադովկիայի ճարտարապետական ավանդույթների բազմազանությունը, էգեյան և ասորական ավանդույթներ (ծովափնյա տարածքների հեծանային բազիլիկները, լեռնային շրջանների փոքր թաղածածկ բազիլիկները, սրահատիպ եկեղեցիներ, խաչաձև և ութանիստ եկեղեցիները): **Բինբիրքիլիսեի համալիրը** կամ այսպես կոչված 100 և 1 եկեղեցիները (5-6-րդ դ. առաջին կես ): Կապադովկիայի հարավային շրջանների եկեղեցիները **(Հին (Էսկի) Անդավալ):** Կենտրոնական և արևելյան շրջանների խաչաձև եկեղեցիները (**Բուզլուկ, Սիվրիհիսար, Խանքյոյ, Կզըլքիլիսե** (Կարմիր եկեղեցի) մոտ 600 թ.): Կենտրոնագմբեթ, բազմանիստ հատակագծով եկեղեցիներ՝ **Գրիգոր Նյուսացու ութանիստ** (օկտագոն), **Հիերո-**

**պոլիսի, Սեբաստիայի (Սվասի) և Բարաքայի ուքանիստ եկեղեցիները,** ինչպես նաև **Բինբիրքիլիսեի** եկեղեցիների խումբը): **Մերիամլըկի Սբ. Թեկղեի** սրբավայրը և ճարտարապետական համալիրը (470 թ.): Արևմտյան ճարտարապետական տարրերը և **Սագալասի բազիլիկը** (6-րդ դ.): **Ալահանի վանքը** կամ **Խոջա կալեսի** (5-րդ դ. երկրորդ կես): Գմբեթավոր բազիլիկ տիպը և դրա հետ կապված կառուցողական դժվարությունները: Եփեսոսի **Սբ. Հովհաննես և Սբ. Մարիամի տաճարները**. կառուցման և վերակառուցման ժամանակը և կապը մայրաքաղաքային ճարտարապետության հետ: Կապադովկյան եկեղեցիների ասկետիկ բնույթը: Պայտաձև կամարը կամ կամարաշարը որպես կապադովկյան ճարտարապետության բնորոշ տարր: Կապադովկիայի եկեղեցիների շինարարական տեխնիկան, «միդիս» շարվածքը և ընդհանրությունները հայկական շինարվեստի հետ: Բազմագույն (պոլիխրոմ) շարվածքի ավանդույթները Կապադովկիայում և հարևան Հայաստանում: Հայաստան Կապադովկիա ճարտարապետական սերտ առնչությունները վաղ միջնադարում:

## 4.2. Քանդակագործություն

Կապադովկիայի ժայռափոր համալիրները տուֆի և կրաքարի շերտերում: Ժայռափոր և գետնափոր քաղաքները՝ **Կայմախլը, Դերինքոյու, Օզկանակ, Աջըգյոլ, Մազա**: Ժայռափոր վանքային համալիրները՝ **Գյորեմեի, Աչըկսարայի, Բալիսիրմայի, Դերբենտի, Գյուլլուդերեի և Իխլարայի հովիտներ**: Կապադովկիայի եկեղեցիների արտաքին հարդարանքը. զուգահեռներ արևելյան քարակերտ և բյուզանդական աղյուսաշեն եկեղեցիների հետ: **Ալահանի վանքի Քյոքերքիլիսեի** մուտքի հարդարանքը և որմնաքանդակները (5-րդ դ.): Պատկերագրությունը և գեղարվեստական ոճը: Ընդհանրությունները հայկական 6-7-րդ դդ. քանդակների հետ: Ժայռափոր եկեղեցիների քանդակային հարդարանքը. քրիստոնեական խորհրդանշական պատկերները **Հին Անդավալում, Ավանոսում, Արգիում** 5-6-րդ դդ. (արմավենի, դափնեպսակ, խաչ շրջանակի մեջ և խաչ աստիճանավոր պատվանդանի վրա, բուսական և երկրաչափական տարրեր): Շրջանակի մեջ առնված խաչային հորինվածքները և դրանց տարատեսակները Կապադովկիայում (5-6-րդ դդ.):

## 4.3. Մոնումենտալ գեղանկարչություն

Ժայռափոր վանքերի ակտիվացումը և դերը արաբական հարձակումների և դրանց հաջորդող պատկերամարտության շրջանում: Ամենավաղ ժայռափոր եկեղեցիները և վերջիններիս կառուցման ժամանակը: Նախապատկերամարտության շրջան՝ 6-7-րդ դդ. **Չավուշինի Սբ. Հովհաննես**, **Հրեշտակապետաց վանքի Սբ. Ստեփանոս եկեղեցիները**, պատկերամարտության շրջան՝ 8-9-րդ դդ. **Զելվեի Սբ. Բարսեղ, Կզլչուխուր, Հովակիմի և Աննայի մատուռը**: Ժայռափոր եկեղեցիների ներքին կառուցվածքը: Ժայռափոր եկեղեցիների հարդարման սկզբունքները և պատկերագրական ծրագիրը: Որմնանկարների գեղարվեստական առանձնահատկությունները: **Թոքալիի (Տոկալիի) առաջին եկեղեցու** որմնանկարները: Գյորեմեի ժայռափոր վանքային համալիրների հետագա զարգացումը: Փոկասների իշխանական տան ներկայությունը Կապադովկիայում: Փոկասների դիրքը բյուզանդական արքունիքում և հայկական ծագումը:

## 5. Հայաստան

Հայաստանի միջնադարյան արվեստը և նրա դերը տարածաշրջանում: Քրիստոնեության տարածումը Հայաստանում (Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներ, Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Կույսեր): Հայաստանում քրիստոնեության ընդունման և հաստատման երկու վարկածը ըստ աղբյուրների (Խորենացի, Ագաթանգեղոս): Հայաստանում քրիստոնեության ընդունման թվականը: Հայաստանը քրիստոնեության նախաշեմին՝ հելլենիստական և հռոմեական շրջանները: Հայկական Եկեղեցու հաստատումը և նրա թեմերը տարածաշրջանում: Քրիստոնեական մշակույթի ներթափանցումը Հայաստան. հունաբան դպրոցը և թարգմանական գրականությունը: Հայ-պարսկական առնչությունները և դրանց դրսևորումը քրիստոնեական շրջանում: Հայաստանի մշակութային շփումները Ասորիքի և արևելյան Փոքր Ասիայի հետ և դրանց նշանակությունը քրիստոնեական արվեստի ձևավորման գործընթացում:

Հայ-բյուզանդական առնչությունները: Հայաստանի քաղաքական և մշակութային իրավիճակը մեծ գերտիրությունների ներքո: Հայաստանի ամենավաղ քրիստոնեական հուշարձանները՝ **Էջմիածնի Մայր տաճարի կրակարանը, Զաքարի բերդի համայնական եկեղեցին** (4-րդ դ.), **Վանքասարի համալիրը** (եկեղեցի, նախասրահ, տապանաքակ) (5-7-րդ դդ., Արցախ), **Երերույքի և Անիի ժայռափոր քարանձավները:**

### 5.1. Ճարտարապետություն

Հայաստանի վաղ միջնադարյան ճարտարապետության տեղը և դերը արևելաքրիստոնեական մշակույթի համատեքստում: Հարցի գիտական տեսանկյունները: Անտիկ տարրերը հայկական վաղքրիստոնեական ճարտարապետության մեջ: Վաղքրիստոնեական դամբարանները՝ **Աղձք (Աղց)** (364 թ.)**, Սբ. Վարդան, Ամարաս, Կարենիս:** Դամբարանների հորինվածքային առանձնահատկությունները (գետնափոր, կիսագետնափոր) և կառուցման ժամանակաշրջանը: Վաղ միջնադարյան այլ մեմորիալ բնույթի կառույցներն ու դրանց ճարտարապետական ձևավորումը (**Օձուն, Աղիտու (Աղուդի)**: **Բարեկամավանի** (Բարձ-

րյալ խաչ) դամբարանը՝ ճարտարապետական հորինվածքը և թվագրության խնդիրը: Հայկական վաղ եկեղեցական կառույցների տիպաբանական և գեղարվեստական առանձնահատկությունները: Հայկական վաղմիջնադարյան ճարտարապետության երկու գլխավոր շրջանները՝ 4-6-րդ դարի վերջին քառորդ և 6-րդ դարի վերջը – 7-րդ դար:

Հայկական բազիլիկալ եկեղեցիների տարատեսակները (միանավ, եռանավ, ինչպես նաև բաց սյունասրահով): 5-6-րդ դդ. միանավ բազիլիկներ՝ **Գառնիի, Լեռնակերտի, Եղվարդի, Ջառջառիսի, Կառնուտի** և այլն: 5-6-րդ դդ. եռանավ բազիլիկներ՝ **Քասախի, Ծիծեռնավանքի, Աշտարակի Ծիրանավոր, Եղվարդի, Կողբի, Աղձքի** և այլն**: Երերույքի բազիլիկը**՝ հորինվածքային առանձնահատկությունները և արտաքին ազդեցության խնդիրը: Ընդհանրություններ ասորական բազիլիկալ կառույցների հետ: **Տեկորի Սբ. Սարգիսը** (480-ական թթ.) և քառամույթ խաչաձև-գմբեթավոր եկեղեցիներն ու գմբեթավոր բազիլիկները՝ **Սբ. Գայանե** (630 թ.), **Բագավանի Մայր տաճարը (**631-639 թթ.), **Մրենի** (639-640 թթ.), **Օձունի** (7-րդ դ. առաջին կես): Հայկական կենտրոնագմբեթ եկեղեցիները (սկսած 6-րդ դ. վերջից): Կենտրոնագմբեթ հորինվածքի զարգացումը Հայաստանում՝ տեղական ավանդույթները և արտաքին ազդեցությունները: Էջմիածնի Մայր տաճարի հորինվածքը. վերակառուցումները և հորինվածքի զարգացումը: Մայր տաճարի նշանակությունը հայկական ճարտարապետության պատմության համար (**Բագարանի Սբ. Թեոդորոս** 624-631 թթ., **Մաստարայի Սբ. Հովհաննես** 620-ական թթ.): **Զվարթնոցի տաճարը** (641-661 թթ.). հորինվածքը, կառուցվածքային առանձնահատկությունները և վերակառուցումները (ըստ՝ Թ. Թորամանյանի ու Ս. Մնացականյանի): **Զվարթնոցի տաճարը** և Երուսաղեմի Հարության Ռոտոնդան: Զվարթնոցի նշանակությունը հայ ճարտարապետության հետագա զարգացման համար և զվարթնոցատիպ տաճարները (**Բանակի և Լեքիթի** տաճարները): Հայկական ճարտարապետության «սինթետիկ» բնույթը. տեղական, արևելյան և բյուզանդական ավանդույթների խնդիրը: Բյուզանդական մշակութային ուղղվածությունը Ներսես Շինարարի օրոք և վերջինիս շինարարական գործունեությունը: Հայկական եռախորան խաչաձև-գմբեթավոր եկեղեցիները և հորինվածքային առնչությունները **Բեթղեհեմի Ծննդյան տաճարի** հետ

(**Դվինի Մայր տաճար** (վերակառ. 7-րդ դ. 40-ական թ.), **Թալինի Կաթողիկե** ( 670-680-ական թթ.), **Իշխանի տաճարը Տայքում** (7-րդ դ. 50-ական թթ.)): Իշխանի տաճարի նախնական հորինվածքի հետ առնչվող հարցերը և տեսակետները: **Արուճի եկեղեցին** (669 թ.): Արուճի կառուցվածքային առանձնահատկությունները, կարկասային սկզբունքը և առնչությունները ուշ հռոմեական ճարտարապետության հետ: Գմբեթավոր դահլիճների ձևավորումը (**Պտղնի, Զովունի, Դդմաշեն** 7-րդ դ. երկրորդ կես): Զովունի և Դդմաշեն եկեղեցիների թվագրման տարբեր տեսանկյունները (Զովունին 5-6-րդ դդ. ըստ Ա. Սահինյանի կամ 7-րդ դ. երկրորդ կես՝ ըստ Ա. Ղազարյանի և Ֆ. Գոնդոլֆոյի, Դդմաշենը 7-րդ դար՝ ըստ Մ. Հասրաթյան կամ 9-10-րդ դդ.՝ ըստ Ա. Ղազարյան): Պաղեստինյան սրբավայրերի Հայաստան «տեղափոխման» Ներսես Շինարարի ծրագիրը:

Անկյունային խորշերով քառախորան տիպի եկեղեցիները Անդրկովկասում: Հռիփսիմեի տաճարը (618 թ.) և հռիփսիմեատիպ եկեղեցիները Հայաստանում (**Ավան 591-602, Թարգմանչաց, Արամուսի Սբ. Նշան, Սիսիանի Սբ. Հովհաննես (Սիսավան), Գառնահովտի Սբ. Գևորգ, Արծվաբերի Սբ. Աստվածածին**՝ բոլորը 7-րդ դ.): Հորինվածքային և կառուցվածքային առանձնահատկությունները: Ավանի տաճարի անտիկ գծերը: «Ազգային» ճարտարապետական դպրոցի «գիտական» հիմնավորումները (Գ. Չուբինաշվիլի): Հայ-վրացական ճարտարապետական ընդհանրությունները **Ջվարի** և **Աթենի** եկեղեցիների օրինակով: Աթենիի հայալեզու շինարարական արձանագրությունը (Թոդոսակ):

6-7-րդ դդ. Կենտրոնագմբեթ, խաչաձև փոքր եկեղեցիներ՝ **Ողջաբերդի, Արթիկի, Արզ(ծ)նիի, Թալինի Սբ. Քրիստոփոր, Լմբատավանքի Սբ. Ստեփանոս, Աշտարակի Կարմրավոր, Կոշի Սբ. Ստեփանոս** և այլն**:** Հորինվածքային առանձնահատկությունները և կապը վաղքրիստոնեական ճարտարապետության հետ: Բազմախորան եկեղեցիները Հայաստանում: **Եղվարդի Զորավար** (Գրիգոր Մամիկոնյանի պատվերով) ութանիստ եկեղեցին և նրա կապը վաղ քրիստոնեական ճարտարապետական ավանդույթների հետ: **Իրինդի** (ութխորան) և **Արագածի** (վեցխորան) **եկեղեցիները** (Թալինի շրջան, 7-րդ դ.): 7-րդ դ. ճարտարապետության նշանակությունը հայկական միջնադարյան տաճարաշինության հետագա զարգացման համար:

## 5.2. Քանդակագործություն

Հայկական միջնադարյան քանդակագործության ուսումնասիրությունը (Ն. Մառ, Հ. Օրբելի, Թ. Թորամանյան, Բ. Առաքելյան, Ս. Մնացականյան, Լ. Ազարյան): Քանդակի տեսակները վաղ միջնադարյան Հայաստանում: Եկեղեցիների և այլ հուշարձանների արտաքին հարդարման դեկորատիվ տարրերը (երկրաչափական, բուսական, կենդանական պատկերներ): Խաչային հորինվածքների վաղ պատկերագրությունն ու գաղափարաբանությունը: **Աղձքի (Աղցի) դամբարանի** քրիստոնեական և նախաքրիստոնեական պատկերները: Աղցի պատկերաքանդակների թվագրության հարցը վաղ քանդակային արվեստի ուսումնասիրության լույսի ներքո (Ս. Տեր-Ներսեսյան): **Ամարասի** և **Ձովունու (Ծառայիշեն) Սբ. Վարդանի** հարդարման տարրերը: **Աղիտուի** հորինվածքային առանձնահատկություններն ու հարդարանքը: Համեմատությունը վաղ աստրական դամբարանների հետ: **Բարեկամավանի** դամբարանի հորինվածքային առանձնահատկությունը և բացառիկությունը: Բարեկամավանի դամբարանի պատկերա- և զարդաքանդակ քիվը և պատկերների գեղարվեստական ավանդույթի ակունքները: Բարեկամավանում պատկերված կենդանիների տեսակները (ըստ մեկնաբանությունների): Կենդանիների պատկերները քրիստոնեական խորհրդանիշների համակարգում (խոյ, ցուլ, արջ): Հայկական եկեղեցիների արտաքին հարդարման սկզբունքները (բարավորներ, քիվեր, պատուհանի շրջակալներ, ճակատի հարդարման տարրեր): Արտաքին հարդարման համակարգի համաքրիստոնեական և տեղական ավանդույթները: Հայկական վաղ միջնադարյան ճարտարապետության զարդաձևերը (շրջանակի մեջ խաչեր, վարդյակներ, արմավաճյուղեր, շուշանածաղիկներ, խաղողի որթ, նուռ, ականթատերևներ) և դրանց համակարգումն ու պարբերացումը ըստ Ն. Տոկարսկու: Քանդակների հնագույն խումբը: **Էջմիածնի Մայր տաճարի** երկու քանդակային սալաքարերը (5-րդ դ.), **Տեկորի Սբ. Սարգիս** եկեղեցու (5-րդ դ. 80-ական թթ.) հարդարանքը (չի պահպանվել): **Երերույքի** և **Քասաղ(խ)ի** բազիլիկների (5-րդ դ. երկրորդ կես) արտաքին հարդարանքը: Քանդակազարդ դրվագներ **Դվինից** (5-7-րդ դդ.), դրանց թվագրման խնդիրները: **Կողբի** բնակավայրը և դրա հնա-

գույն քանդակային հուշարձանները: Կողբի բարավորի թվագրման խնդիրը (5-6 և 7-րդ դդ) և պատկերագրությունը:

